

ք. Երևան, 12.01.2012
Ելք № ՎՄ-032

Ռուզաննա Գրիգորյանին

Հարգելի տիկին Գրիգորյան

Ի պատասխան «Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնության անունից» 2012 թ. հունվարի 11-ի Ձեր գրության (այսուհետ՝ Գրություն) հայտնում ենք.

«Վալլեքս» խմբի ընկերությունները, ղեկավարվելով իրենց գործունեության տեղեկատվական թափանցիկության ապահովման խմբային սկզբունքներով, ողջունում են իրենց աշխատանքի նկատմամբ համարժեք հասարակական վերահսկողության նպատակ ունեցող գործողությունները և ամեն կերպ աջակցում դրանց պատշաճ իրականացմանը: Մենք վստահ ենք, որ կանոնավոր և համակարգված կերպով իրականացվող հասարակական վերահսկողությունը կարող է արդյունավետ լինել և իրապես նպաստել տնտեսվարման բնապահպանական և սոցիալ-տնտեսական բնութագրերի բարելավմանը. դա է վկայում առաջադեմ համաշխարհային փորձն ու պարզ ողջախոհությունը:

Թեղուտում լեռնահարստացուցիչ կոմբինատի կառուցման և պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման բոլոր անցած փուլերում «Վալլեքս» խմբի ընկերությունները պարբերաբար կազմակերպել են համապատասխան մասնագիտական շրջանակներ և (կամ) հասարակության տեղեկատվական շահերը ներկայացնող տարբեր անձանց խմբերի այցելություններ, եղել են նաև հրապարակային բաց հրավերներ, որոնց միանալու հնարավորություն ունեցել են բոլոր շահագրգիռ անձինք:

«Վալլեքս» խմբի ընկերությունները պատրաստակամ են ընդառաջ գնալ նաև Գրությամբ ներկայացված Ձեր խնդրանքին և թույլատրել «Թեղուտի պաշտպանության նախաձեռնության» անունից հանդես եկող անձանց մինչև 15 հոգանոց խմբի մուտքը «Թեղուտ» ՓԲԸ տարածք: Մուտքի թույլտվություն տալու համար անհրաժեշտ է մինչև 2012 թ. հունվարի 13-ը, ժամը 15:00 ներկայացնել այն անձանց ցուցակը, ում մուտքը «Թեղուտ» ՓԲԸ տարածք խնդրում էք թույլատրել՝ նշելով անձնագրային տվյալները, մասնագիտությունը, աշխատավայրը (եթե ունի): «Թեղուտ» ՓԲԸ տարածք այդ խմբի մուտքը թույլատրված կլինի Գրության մեջ նշված ժամանակահատվածում՝ ժամը 13:00-14:00: Խմբի գտնվելը «Թեղուտ» ՓԲԸ տարածքում թույլատրված կլինի Գրության մեջ նշված տևողությամբ՝ 4 ժամվա ընթացքում: Խմբի բոլոր անդամները «Թեղուտ» ՓԲԸ անվտանգության ծառայության կողմից կանցնեն «Թեղուտ» ՓԲԸ տարածքում գտնվելու անվտանգության կանոնների վերաբերյալ հրահանգավորում, կկատարվի գրանցում համապատասխան մատյանում, և խմբի բոլոր անդամները պետք է իրենց ստորագրություններով հաստատեն հրահանգավորման փաստը և հրահանգներին ենթարկվելու իրենց պարտավորվածությունը: Խումբը «Թեղուտ» ՓԲԸ տարածքում կարող է գտնվել և տեղաշարժվել միայն «Թեղուտ» ՓԲԸ համապատասխան աշխատակիցների ուղեկցությամբ: Հայտնում ենք մեր պատրաստակամությունը խմբի այցի ավարտին կազմակերպելու քննարկում «Թեղուտ» ՓԲԸ գրասենյակում, որի շրջանակներում

«Վալլեքս Գրուպ» ՓԲԸ

Հայաստանի Հանրապետություն
0010 Երևան, Խանջյան փ.19
Հեռ.՝ 510888, ֆաքս՝ 510880
info@vallex.com

Vallex Group CJSC

19 Khanjyan Str., 0010 Yerevan
Republic of Armenia
Tel.: (+374 10) 510888, Fax: (+374 10) 510880
www.vallex.com

համապատասխան մասնագետները կարող են պատասխանել Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագրի վերաբերյալ Ձեր հարցերին:

Մինևույն ժամանակ հարկ ենք համարում ընդգծել, որ Գրությունը առնվազն զուտ ժամանակագրորեն համընկել է իրադրության հետ, երբ մայրաքաղաք Երևանի տարբեր փողոցներում գետնին, պատերին և այլ վայրերում հանդիպում ենք համապատասխան կարգի խախտմամբ արված, Թեղուտի հիշատակմամբ գրառումների: Հույս ենք հայտնում, որ Ձեր ներկայացրած նախաձեռնությունը կապված չէ վարչական իրավախախտման տարրեր պարունակող վերոնշյալ գործողությունների հետ, որոնց նպատակը, դատելով այդ գրառումների բովանդակությունից, տրամագծորեն տարբերվում է Գրությամբ ներկայացված նպատակից:

Տեղեկացնում ենք նաև, որ այն տեղամասը, որը Դուք հավանաբար նկատի եք ունեցել «Լյովայի տարածք» գրելով (նախկին սեփականատերը՝ Լևոն Ալիխանյան), հանդիսանում է «Թեղուտ» ՓԲԸ սեփականությունը: Որպես բարի կամքի դրսևորում՝ «Թեղուտ» ՓԲԸ ընկերությունը թույլատրել է անհատույց շարունակել գյուղատնտեսական գործունեությունն այն տեղամասերի նախկին սեփականատերերին (այդ թվում՝ Լևոն Ալիխանյանին), որտեղ դեռևս չեն իրականացվում հանքի շահագործման հետ կապված ծրագրային աշխատանքներ:

Հարգանքներով՝


Գագիկ Արզումանյան

«Վալլեքս» խմբի ընկերությունների փոխնախագահ